Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-587-23.04.2020-ՊԻ-011

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ
# «ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» 2012 թվականի մարտի 21-ի ՀՕ-106-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«6) արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցների և ուժերի միասնական ղեկավարումն իրականացնող և կիրառվող միջոցառումների իրականացումը և սահմանափակումների կիրառումը համակարգող՝ սույն օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված մարմինները և նրանց իրավասության շրջանակը».

2) 7-րդ կետը «իրականացման» բառից հետո լրացնել «և սահմանափակումների կիրառման» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետից հետո լրացնել նոր՝ 1.1-ին կետ.

«1.1) համաճարակի հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության դեպքում՝ անձնական ազատության իրավունքի սահմանափակում՝ հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդության տարածումը կանխելու նպատակով.».

2) 3-րդ կետը «սահմանափակումներ» բառից հետո լրացնել «, ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման պայմանով սահմանափակումներ» բառերով.

3) 5-րդ կետը «իրականացնելու» բառից հետո լրացնել «և դրանց մասնակցելու» բառերով.

4) 7-րդ կետը «իրականացում» բառից հետո լրացնել «, տրանսպորտային միջոցներով տեղափոխվող ուղևորների քանակի նորմավորում» բառերով.

5) 9-րդ կետը «լիազորությունների» բառից հետո լրացնել «և գործառույթների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության» բառերով, իսկ «կասեցում» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն կետում նշված մարմինների և կազմակերպությունների գործառույթների իրականացման ձևերի և եղանակների ժամանակավոր փոփոխություն» բառերով:

**Հոդված 3.** Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 8. Արտակարգ դրության տարածքում պետական կառավարման առանձնահատկությունները**

1. Արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքների վերացման և արտակարգ դրությամբ պայմանավորված այլ հրատապ հարցեր լուծելու նպատակով արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է սահմանվել, որ վարչապետը կամ այդ որոշմամբ սահմանված փոխվարչապետը արտակարգ դրության ընթացքում ի պաշտոնե հանդես է գալիս որպես արտակարգ դրության տարածքի պարետ (այսուհետ՝ պարետ):

2. Պարետն իրականացնում է արտակարգ դրության տարածքում արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի և միջոցների միասնական ղեկավարումը, ինչպես նաև համակարգում է արտակարգ դրության պայմաններում կիրառվող միջոցառումների իրականացումը և սահմանափակումների կիրառումը:

Սույն մասով սահմանված լիազորությունների իրականացման համար պարետը կարող է ընդունել համապատասխանաբար վարչապետի կամ փոխվարչապետի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

3. Արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է ստեղծվել արտակարգ դրության տարածքի պարետատուն (այսուհետ՝ պարետատուն)՝ որպես համապատասխանաբար վարչապետին կամ փոխվարչապետին կից խորհրդակցական մարմին: Պարետատունը ղեկավարում է պարետը: Պարետատան կազմը սահմանվում է արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, իսկ գործունեության կարգը կարող է սահմանել պարետը:»:

**Հոդված 4.** Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել նոր նախադասությամբ.

«Արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կամ այդ որոշմամբ նախատեսված դեպքերում՝ պարետի որոշմամբ, արտակարգ դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացման համար կարող են ներգրավվել պետական կառավարման համակարգի այլ մարմինները և Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրված կամ 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ կազմակերպությունները (մարմինների և կազմակերպությունների միջոցները և ուժերը), ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ միջոցառումներն իրականացնելով որպես պատվիրակված լիազորություն:».

2) 2-րդ մասի 5-րդ կետում «5-րդ կետով» բառերը փոխարինել «1.1-ին և 5-րդ կետերով» բառերով:

**Հոդված 5.** Օրենքի 10-րդ հոդվածը լրացնել նոր՝ 5-րդ մասով.

«5. Արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում արտակարգ դրության իրավական ռեժիմով սահմանված սահմանափակումները և միջոցառումները կարող են կիրառվել նաև որպես սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված՝ իրավունքների և ազատությունների պայմանով սահմանափակում կամ միջոցառումների պայմանով կիրառում: Սույն մասով սահմանված դեպքերում սահմանափակումների և միջոցառումների կիրառման պայմանները սահմանվում են արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կամ պարետի կողմից:»:

**Հոդված 6.** Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4-րդ և 5-րդ մասերով.

«4. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված դեպքում անձի անձնական ազատության իրավունքը կարող է սահմանափակվել արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված մարմինների կողմից տրված գրավոր կարգադրությամբ, իսկ տվյալ պահին այն գրավոր ձևակերպելու անհնարինության դեպքում՝ բանավոր կարգադրությամբ, որը հասցեատիրոջ բանավոր կամ գրավոր պահանջով ենթակա է հետագա գրավոր ձևակերպման ոչ ուշ, քան պահանջը ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն մասով սահմանված դեպքում անձնական ազատության սահմանափակման ենթարկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է անձնական ազատության իրավունքի սահմանափակման պատճառների, բժշկական խորհրդատվության մատչելիության իրավունքի և իր պարտականությունների մասին: Անձնական ազատության սահմանափակման ենթարկված անձի պահանջով սահմանափակումը կիրառող մարմինը պարտավոր է անձի սահմանափակման մասին անհապաղ տեղեկացնել նրա ընտրած անձին:

5. Արտակարգ դրություն հայտարարելու հիմք հանդիսացած հանգամանքների արդյունքում առաջացած սոցիալական խնդիրների և տնտեսական հետևանքների հակազդման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարող են սահմանվել ֆիզիկական և իրավաբանական անձանց աջակցությանն ուղղված միջոցառումներ:»:

**Հոդված 7. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» N 298-Ն որոշմամբ ստեղծված պարետատունը շարունակում է գործել որպես պարետին կից խորհրդակցական մարմին՝ նույն որոշմամբ սահմանված կազմով և կարգով, իսկ պարետը շարունակում է գործել որպես սույն օրենքի իմաստով հանդես եկող պարետ:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը պարետի կողմից ընդունված ակտերը շարունակում են գործել որպես փոխվարչապետի ենթաօրենսդրական ակտեր:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» 2012 թվականի մարտի 21-ի ՀՕ-106-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 6-րդ ~~կետում «հոդվածի համաձայն ստեղծված պետական հատուկ» բառերը փոխարինել «հոդվածով նախատեսված» բառերով.~~

~~2) 7-րդ~~ կետը շարադրել -նոր խմբագրությամբ.

«~~7~~6) արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցների և ուժերի միասնական ղեկավարումն իրականացնող և կիրառվող միջոցառումների իրականացումը և սահմանափակումների կիրառումը համակարգող~~, ինչպես նաև կիրառվող միջոցառումների~~՝ սույն օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված մարմինները և նրանց իրավասության շրջանակը».

2) 7-րդ կետը «իրականացման~~ համար պատասխանատու պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք»:~~» բառից հետո լրացնել «և սահմանափակումների կիրառման» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 7-րդ ~~հոդվածում՝~~

~~1)~~հոդվածի 1-ին մասում~~ 1-ին կետը «սահմանափակում» բառից հետո լրացնել «տեղաշարժման նորմավորում» բառերով.՝~~

~~2~~1) 1-ին կետից հետո լրացնել նոր՝ 1.1-ին կետ.

«1.1) համաճարակի հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության դեպքում՝ անձնական ազատության իրավունքի սահմանափակում՝ ~~համաճարակի~~հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդության տարածումը կանխելու նպատակով.».

2) 3~~)~~-րդ կետը «սահմանափակումներ» բառից հետո լրացնել «, ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման պայմանով սահմանափակումներ» բառերով.

~~4~~3) 5-րդ կետը «իրականացնելու» բառից հետո լրացնել «և դրանց մասնակցելու» բառերով.

~~5~~4) 7-րդ կետը «իրականացում» բառից հետո լրացնել «, տրանսպորտային միջոցներով տեղափոխվող ուղևորների քանակի նորմավորում» բառերով.

~~6~~5) 9-րդ կետը «լիազորությունների» բառից հետո լրացնել «և գործառույթների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության» բառերով, իսկ «կասեցում» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն կետում նշված մարմինների և կազմակերպությունների գործառույթների իրականացման ձևերի և եղանակների ժամանակավոր փոփոխություն» բառերով:

**Հոդված 3.** Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 8. Արտակարգ դրության տարածքում պետական կառավարման առանձնահատկությունները**

1. Արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքների վերացման և արտակարգ դրությամբ պայմանավորված այլ հրատապ հարցեր լուծելու նպատակով արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է սահմանվել, որ վարչապետը կամ այդ որոշմամբ սահմանված փոխվարչապետը արտակարգ դրության ընթացքում ի պաշտոնե հանդես է գալիս որպես արտակարգ դրության տարածքի պարետ (այսուհետ՝ պարետ):

2. Պարետն իրականացնում է արտակարգ դրության տարածքում արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի և միջոցների միասնական ղեկավարումը, ինչպես նաև համակարգում է արտակարգ դրության պայմաններում կիրառվող միջոցառումների իրականացումը~~:~~ և սահմանափակումների կիրառումը: Սույն մասով սահմանված լիազորությունների իրականացման համար պարետը կարող է ընդունել համապատասխանաբար վարչապետի կամ փոխվարչապետի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

3. Արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ~~սահմանված լինելու դեպքում պարետը~~ կարող է ~~ստեղծել և ղեկավարել~~ստեղծվել արտակարգ դրության տարածքի պարետատուն՝ (այսուհետ՝ պարետատուն)՝ որպես համապատասխանաբար վարչապետին կամ փոխվարչապետին կից խորհրդակցական մարմին: Պարետատունը ղեկավարում է պարետը: Պարետատան կազմը ~~և~~սահմանվում է արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, իսկ գործունեության կարգը ~~սահմանում~~կարող է սահմանել պարետը:»:

**Հոդված 4.** Օրենքի 9-րդ ~~հոդվածի~~հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել նոր նախադասությամբ.

«Արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կամ այդ որոշմամբ նախատեսված դեպքերում՝ պարետի որոշմամբ, արտակարգ դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացման համար կարող են ներգրավվել պետական կառավարման համակարգի այլ մարմինները և պետության կողմից հիմնադրված կամ պետության մասնակցությամբ կազմակերպությունները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ միջոցառումներն իրականացնելով որպես պատվիրակված լիազորություն~~:»~~:».

2) 2-րդ մասի «5-րդ կետով» բառերը փոխարինել «1.1-ին և 5-րդ կետերով» բառերով:

**Հոդված 5.** Օրենքի 10-րդ հոդվածը լրացնել նոր՝ 5-րդ մասով.

«5. Արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում արտակարգ դրության իրավական ռեժիմով սահմանված սահմանափակումները և միջոցառումները կարող են կիրառվել նաև որպես սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված՝ իրավունքների և ազատությունների պայմանով սահմանափակում կամ միջոցառումների պայմանով կիրառում: Սույն մասով սահմանված դեպքերում սահմանափակումների և միջոցառումների կիրառման պայմանները սահմանվում են ~~Արտակարգ~~արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կամ պարետի կողմից:»:

**Հոդված 6.** Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4-րդ և 5-րդ մասերով.

«4. ~~Համաճարակի հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության~~Սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված դեպքում անձի անձնական ազատության իրավունքը կարող է սահմանափակվել արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված մարմինների~~արտակարգ դրության պայմաններում կիրառվող միջոցառումների իրականացման համար ներգրավված մարմինների~~ կողմից տրված ~~բանավոր կամ արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում՝ գրավոր կարգադրությամբ~~գրավոր կարգադրությամբ, իսկ տվյալ պահին այն գրավոր ձևակերպելու անհնարինության դեպքում՝ բանավոր կարգադրությամբ, որը հասցեատիրոջ բանավոր կամ գրավոր պահանջով ենթակա է հետագա գրավոր

ձևակերպման ոչ ուշ, քան պահանջը ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն մասով սահմանված դեպքում անձնական ազատության սահմանափակման ենթարկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է անձնական ազատության իրավունքի սահմանափակման պատճառների, բժշկական խորհրդատվություն մատչելիության իրավունքի և իր պարտականությունների մասին~~ և կարող~~:Անձնական ազատության սահմանափակման ենթարկված անձի պահանջով սահմանափակումը կիրառող մարմինը պարտավոր է ~~պահանջել, որ~~անձի սահմանափակման մասին անհապաղ ~~տեղեկացվի իր~~ տեղեկացնել նրա ընտրած ~~անձը:~~անձին:

5. Արտակարգ դրություն հայտարարելու հիմք հանդիսացած հանգամանքների արդյունքում առաջացած սոցիալական խնդիրների և տնտեսական հետևանքների հակազդման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարող են սահմանվել ֆիզիկական և իրավաբանական անձանց աջակցությանն ուղղված միջոցառումներ:»:

**Հոդված 7. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» N 298-Ն որոշմամբ ստեղծված պարետատունը շարունակում է գործել որպես պարետին կից խորհրդակցական մարմին՝ նույն որոշմամբ սահմանված կազմով և կարգով, իսկ պարետը շարունակում է գործել որպես սույն օրենքի իմաստով հանդես եկող պարետ:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը պարետի կողմից ընդունված ակտերը շարունակում են գործել որպես փոխվարչապետի ենթաօրենսդրական ակտեր:

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի (Կ-587-23.04.2020-ՊԻ-011/0) և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի (Կ-587[1]-23.04.2020-ՊԻ-011/0) նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունների

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկու-թյունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | «Լուսավոր Հայաստան» խմբակցություն | Նախագծերի փաթեթ | 1.« Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում (այսուհետ՝ «Օրենք») փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ «Նախագիծ») 1-ին հոդվածի 2-րդ կետով խմբագրման է ենթարկվում Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, ըստ որի՝ ստացվում է | **Ընդունվե է մասնակի:** Հարկ է նկատել, որ գործող կարգավորման համաձայն էլ՝ Կառավարության որոշմամբ նշանակված պարետը իրականացնում է նշված ուժերի միասնական կառավարումը, այնինչ հենց գործող | **Ընդունվել է մասնակի :** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հետևյալը.<br>*Արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, ի թիվս այլնի, սահմանվում են արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցների և <u>ուժերի ղեկավարումն իրականացնող</u> և կիրառվող միջոցառումների իրականացումը համակարգող, ինչպես նաև կիրառվող միջոցառումների իրականացման համար պատասխանատու <u>պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք</u>:*<br>Օրենքի 9-րդ հոդվածի («*Արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցները և ուժերը*») 1-ին մասի համաձայն՝ *արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով կարող են օգտագործվել ոստիկանության, ազգային անվտանգության և պաշտպանության պետական լիազոր* | կարգավորմամբ հստակեցված չէ այն պաշտոնատար անձանց շրջանակը, ովքեր կարող են նշանակվել պարետ: Ընդ որում՝ խոսքը վերաբերում է ոչ այնքան մարմինների, այլ դրանց միջոցների և ուժերի ղեկավարմանը, այն էլ՝ արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովման համար: Իսկ նախագծով սահմանվում է այնպիսի պաշտոնատար անձանց շրջանակ, որոնք գործադիր իշխանության ոլորտում համակարգման լիազորություններով են օժտված:<br>Բացի այդ, նախագծի լրամշակման արդյունքում Օրենքի 9-րդ հոդվածում հստակեցվել է որ խոսքը վերաբերում է | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | *մարմինների ուժերն ու միջոցները:* Այսպիսով, ստացվում է, որ արտակարգ դրության պայմաններում ոստիկանության, ազգային անվտանգության և զինված ուժերի ղեկավարումը կառավարության որոշմամբ կարող է իրականացնել այլ անձ(իք), քան այդ մարմինների՝ օրենքին համապատասպան նշանակված և գործող ղեկավարները: Կարծում ենք, որ սա անթույլատրելի, չհիմնավորված և չարդարացված մոտեցում է հատկապես ուժայինների մասով:<br>Առաջարկում ենք հանել խնդրահարույց ձևակերպումը: | ներգրավվող մարմինների ուժերին և միջոցներին: | |
| | «Լուսավոր Հայաստան» խմբակցություն | Նախագծերի փաթեթ | 2. Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվող կարգավորումների համաձայն՝ Օրենքի 7-րդ հոդվածում կկատարվի հետևյալ լրացումը՝<br>*Արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում արտակարգ դրության ընթացքում արտակարգ դրության* | **Ընդունվել է ի գիտություն:**<br>Նախագծի լրամշակման արդյունքում սահմանվել են կարգավորման մի շարք մանրամասներ և նոր երաշխիքներ: | **Ընդունվել է ի գիտություն:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | *տարածքում կարող են կիրառվել հետևյալ միջոցառումները և իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումները.*<br>*(…)*<br>*1.1) համաճարակի հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության դեպքում՝ <u>անձնական ազատության իրավունքի սահմանափակում՝</u> համաճարակի տարածումը կանխելու նպատակով.*<br>*(…):*<br>Խնդիրն այն է, որ անձնական ազատության իրավունքի սահմանափակման մանրամասները որևէ կերպ Նախագծով չեն կարգավորվում, ինչի հետևանքով այդ միջոցառման իրականացմանը ներգրավված մարմիններն ու պաշտոնատար անձիք կարող են դրսևորել կամայականություն՝ խախտելով սահմանափակման համար | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | անհրաժեշտ և թույլատրելի սահմանները:<br>Առաջարկում ենք Օրենքի 11-րդ հոդվածում որպես լրացում առաջարկվող 4-րդ մասում կարգավորել արտակարգ դրության պայմաններում անձի անձնական ազատությունը սահմանափակելու մանրամասները (իրավական հիմքերն ու ընթացակարգը): | | |
| | «Լուսավոր Հայաստան» խմբակցություն | Նախագծերի փաթեթ | 3. Նախագծի 3-րդ հոդվածով սահմանվում է, որ *արտակարգ դրության պարետ կարող է լինել միայն վարչապետը կամ փոխվարչապետը* (առաջարկվող խմբագրությամբ՝ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մաս), որպիսի սահմանափակման հիմնավորումը բացակայում է: Առաջարկում ենք այս մասով կարգավորումը թողնել նույնը, քանի որ կախված արտակարգ դրության հայտարարման հիմքերից՝ հնարավոր է, որ առավել նպատակահարմար լինի պարետ նշանակել օրինակ որևէ | **Չի ընդունվել:**<br>Ինչպես նշվեց ձեր կողմից ներկայացված նախորդ առաջարկներում՝ պարետը օժտվում է արտակարգ դրության ռեժիմում ներգրավված ուժերի և միջոցների միասնական ղեկավարման գործառույթով, այնինչ գտնում ենք, որ նման | **Չի ընդունվել:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | նախարարի կամ նեղ մասնագետի կամ այլ անձի: | լիազորությամբ կարող է օժտված լինել գործադիր իշխանության ոլորտում համակարգման լիազորություններ ունեցող պաշտոնատար անձը, քանի որ խոսքը գնում է առավելապես կառավարությանը, վարչապետին, նախարարություններին ենթակա մարմինների ղեկավարման մասին: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 152 հոդվածի համաձայն՝ վարչապետը որոշում է Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները, ղեկավարում է Կառավարության գործունեությունը և | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | համակարգում է Կառավարության անդամների աշխատանքը: Փոխվարչապետն էլ նույն հոդվածի ուժով կարող է իրականացնել Կառավարության գործունեության առանձին ոլորտների համակարգումը: | |
| | «Լուսավոր Հայաստան» խմբակցություն | Նախագծերի փաթեթ | 4. Նույն հոդվածով առաջարկվում է նաև սահմանել, որ *պարետն իրականացնում է արտակարգ դրության տարածքում արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի (…) միասնական ղեկավարումը* (առաջարկվող խմբագրությամբ՝ Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մաս):<br>Եթե մեկնաբանենք այնպես, որ «ղեկավարում» և «միասնական ղեկավարում» եզրերի միջև բովանդակային տարբերություն չկա, | **Ընդունվել է ի մասնակի:** Նախագծի լրամշակման արդյունքում եզրույթները միասնականացվել են: Ինչ վերաբերում է խորհրդակցական մարմնի կարգավիճակին, ապա դա նախատեսված է «Կառավարչական | **Ընդունվել է ի մասնակի:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ապա նշյալ դրույթը հակասում է Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ Նախագծով առաջարկվող խմբագրությանը, քանի որ այնտեղ առաջարկվում է *արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող (…) ուժերի ղեկավարումն իրականացնող պետական մարմիններին ու պաշտոնատար անձանց սահմանել արտակարգ դրություն հայտարարելու մասին կառավարության որոշմամբ:*<br>Եթե համարվում է, որ «ղեկավարում» և «միասնական ղեկավարում» եզրերի միջև առկա է բովանդակային տարբերություն, ապա առաջարկում ենք Նախագծով կարգավորել, թե Օրենքի իմաստով ինչ է նշանակում միասնական ղեկավարում:<br>Միաժամանակ, անհասկանալի է *պարետատանը (փոխ)վարչապետին կից խորհրդակցական մարմնի կարգավիճակ տալը* (առաջարկվող խմբագրությամբ՝ Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մաս): Նույն մասով առաջարկվում է սահմանել, որ | իրավահարաբերությունների մասին» օրենքով, ըստ որի՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում պաշտոնատար անձը կարող է ստեղծել խորհրդակցական մարմին, որոնցում որպես կանոն ընդգրկվում են ի պաշտոնե հանդես եկող անձինք կամ այլ անձինք՝ հասարակական հիմունքներով: Նույն կարգավիճակով պաշտոնատար անձինք հանդես են գալու պարետատանը կազմում՝ ի պաշտոնե: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | *պարետատան կազմը (…) սահմանում է պարետը:* Եթե պարետատան կազմում ընդգրկվող անձիք այդ աշխատանքի համար վարձատրվում են, ապա առաջարկում ենք Օրենքով կամ դրան կից հավելվածով սահմանել պարետատան ստորաբաժանումները, դրանցից յուրաքանչյուրում առավելագույն հաստիքների քանակը և վճարման դրույքաչափերը: | | |
| | «Լուսավոր Հայաստան» խմբակցություն | Նախագծերի փաթեթ | 5. Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքի 9-հոդվածի 1-ին մասը լրացվում է հետևյալ նախադասությամբ՝ *արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կամ այդ որոշմամբ նախատեսված դեպքերում՝ պարետի որոշմամբ, արտակարգ դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացման համար կարող են ներգրավվել (…) պետության մասնակցությամբ կազմակերպությունները (…):* Առաջարկում ենք վերանայել այս դրույթը՝ սահմանելով, որ արտակարգ դրության միջոցառումների | **Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | իրականացմանը կարող են ներգրավվել այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական կապիտալում պետական մասնակցությունն ապահովում է որոշիչ ձայնի իրավունք: | | |
| | «Լուսավոր Հայաստան» խմբակցություն | Նախագծերի փաթեթ | 6. Նախագծի 6-րդ հոդվածով առաջարկվում է Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով՝ *համաճարակի հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության դեպքում անձի անձնական ազատության իրավունքը կարող է սահմանափակվել արտակարգ դրության պայմաններում կիրառվող միջոցառումների իրականացման համար ներգրավված մարմինների կողմից տրված <u>բանավոր կամ</u> արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում՝ գրավոր կարգադրությամբ: Սույն մասով սահմանված դեպքում* | **Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: | **Ընդունվել է:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | *անձնական ազատության սահմանափակման ենթարկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է անձնական ազատության իրավունքի սահմանափակման պատճառների մասին և կարող է պահանջել, որ սահմանափակման մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը:*<br>Առաջարկում ենք այստեղից հանել «բանավոր կամ» բառերը, քանի որ նախ՝ վարչական վարույթի առկայության դեպքում կարող է խնդիր առաջանալ բանավոր կարգադրության առկայությունն ապացուցելու մասով: Երկրորդ՝ պատշաճ ընթացակարգը ենթադրում է գրավոր ակտի առկայություն: Առաջարկում ենք բանավոր ընթացակարգից չհրաժարվելու պարագայում առնվազն սահմանել, որ բանավոր ակտի գրավոր տեսքը կազմվում և տրամադրվում է հասցեատիրոջը՝ 24 ժամվա ընթացքում:<br>Առաջարկում ենք նույն հոդվածում | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մանրամասնել «տեղեկացնել» գործողության մանրամասներն ու դրա պատշաճ ընթացակարգը:<br>Միաժամանակ առաջարկում ենք այստեղ պահպանել Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման ենթակոմիտեի (ՄԱԿ) 2020թ. մարտի 25-ի առաջարկի[1] 10-րդ կետի 5-րդ ենթակետի բոլոր չափորոշիչները՝ «*քանի որ կարանտինային հաստատություններն ազատությունից փաստացի զրկման ձև են, այնտեղ գտնվող անձինք պետք է կարողանան օգտվել վատ վերաբերմունքի դեմ հիմնական երաշխիքներից, ներառյալ՝ կարանտինային հաստատություն տեղավորվելու պատճառների մասին տեղեկացվելու, անկախ բժշկական խորհրդատվության մատչելիության,* | | |

[1] https://ombuds.am/images/files/87897591ca5a3d18af9ef597146ca812.pdf?fbclid=IwAR2_hQn5LdpKde3xflJYHJUw2fYQRV-69ihXq5ExTjK-vO24s7_SifcX1gg

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | *փաստաբանի և կարանտինում գտնվելու մասին երրորդ անձին տեղեկացնելու իրավունքներից՝ իրենց կարգավիճակին և դրությանը համապատասխան*»: Առաջարկում ենք նաև այս վարույթի նկատմամբ սահմանել դատական վերահսկողություն, ինչը բխում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներից: | | |
| | «Լուսավոր Հայաստան» խմբակցություն | Նախագծերի փաթեթ | 7. Առաջարկում ենք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածը խմբագրել այնպես, որ ռազմական կամ արտակարգ դրության պայմաններում սահմանափակումների կիրառմանը և միջոցառումների իրականացմանն ուղղված նորմատիվ իրավական ակտերի նախագծերը ոչ թե չենթարկվեն փորձաքննության, այլ ենթարկվեն փորձաքննության հնարավորինս սեղմ ժամկետում, քանի | **Չի ընդունվել:** Արտակարգ դրության ընթացքում որոշումների կայացումը պահանջում է խիստ օպերատիվություն, ինչը գործնականում հնարավոր չի լինի ապահովել նախագծերի փորձաքննության իրականացմամբ: Նույն տրամաբանությամբ էլ գործող կարգավորումներով փորձաքննության չեն | **Չի ընդունվել:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | որ այդ ակտերով հաճախ սահմանափակվում են անձանց հիմնարար և այլ իրավունքները, ըստ այդմ՝ շատ կարևոր է նման իրավական ակտերի մասնագիտական փորձաքննության պահանջը պահպանելն ու պատշաճ ապահովելը: | ենթարկվում արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշումների նախագծերը: | |
| | «Լուսավոր Հայաստան» խմբակցություն | Նախագծերի փաթեթ | 8. Առաջարկում ենք Նախագիծը լրացնել նոր կարգավորմամբ, որը հնարավորություն կտա իշխող ուժից անկախ մարմնի կողմից մոնիթորինգի ենթարկել արտակարգ դրության միջոցառումների իրավաչափությունը: Մասնավորապես, նշյալ մարմնում առաջարկում ենք որպես մեծամասնություն ընդգրկել խորհրդարանական ընդդիմության ներկայացուցչներին, այսինքն՝ սահմանել, որ արտակարգ դրության միջոցառումների իրավաչափությունը գնահատող անկախ մարմնում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվին հակառակ համամասնությամբ. Ազգային ժողովի | **Ընդունվել է ի գիտություն:** Ներկայացված առաջարկը կարծում ենք չի տեղավորվում «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի կարգավորման շրջանակներում | **Ընդունվել է ի գիտություն:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխված են համաձայն Դոնթի բանաձևի: Իշխանական խմբակցությունն այս պահին զբաղեցնում է մանդատների 66,66%-ը, իսկ ընդդիմությանը հատկացված է՝ 33,34%-ը: Առաջարկում ենք քննարկվող մարմնում ընդդիմությանը տրամադրել մանդատների 66,66%-ը, իսկ իշխանության ներկայացուցիչներին՝ տեղերի 33,34%-ը: | | |
| | «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն | Նախագծերի փաթեթ | **Հոդված 1.** Նախագծի 4-րդ հոդվածում<br><br>1) «Արտակարգ դրություն» բառերից առաջ լրացնել «արտակարգ իրավիճակի հիմքով» բառերը:<br><br>**Հոդված 2.** Նախագծի 6-րդ հոդվածում<br><br>• հանել «իսկ տվյալ պահին այն գրավոր անհնարինության դեպքում բանավոր կարգադրությամբ» բառերը,<br>• հանել «Սույն մասով սահմանված դեպքում տրված բանավոր կարգադրությունը | **Չի ընդունվել:** Առաջարկվող կարգավորումները ներդրվել են արտակարգ իրավական ռեժիմի արդյունվետ ապահովման տեսանկյունից:<br><br>**Չի ընդունվել:** Նախագծի լրամշակման արդյունքում սահմանվել է, որ որպես կանոն նման կարգադրությունը | **Չի ընդունվել:**<br><br>**Չի ընդունվել:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հասցեատիրոջ բանավոր և գրավոր պահանջով ենթակա է հետագա գրավոր ձևակերպման ոչ ուշ, քան պահանջը ստանալուց հետո՝մեկ աշխատանքային օրվա ընթացքում» նախադասությունը:<br><br>Նախագծի 4-րդ հոդվածին վերաբերող առաջարկները պայմանավորված են բացառապես ժողովրդավարական սկզբունքների պահպանմանն և մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների իրականացման ազատության երաշխավորմանն ուղղված պետության պոզիտիվ պարտականությամբ: ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, *ժողովրդավարական*, սոցիալական, իրավական պետություն է:<br><br>Ժողովրդավարական երկրներում անթույլատրելի է, որ արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կամ այդ որոշմամբ նախատեսված դեպքերում՝ պարետի որոշմամբ, արտակարգ | տրվում է գրավոր, սակայն հնարավոր չէ բացառել դեպքեր, երբ տվյալ պահին, ելնելով համաճարակի կանխման անհրաժեշտությունից, անհրաժեշտ է բանավոր կարգով և օպերատիվ կերպով սահմանափակումների կիրառում: Նման կարգավորումը կիրառելի է նաև այլ երկրներում: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացման համար ներգրավվեն պետական կառավարման համակարգի այլ մարմինները և պետության կողմից հիմնադրված կամ պետության մասնակցությամբ կազմակերպությունները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ միջոցառումներն իրականացնելով որպես պատվիրակված լիազորություն, բացառությամբ արտակարգ իրավիճակի հիմքով արտակարգ դրություն հայտարարելու դեպքերին, քանզի ընդունելի է, որ արտակարգ իրավիճակների ժամանակ պայմանավորված օբյեկտիվ հանգամաներով հաճախ ծագում է պետական ռեսուրսների՝այդ թվում օժանդակող անձնակազմի լրացման կարիք: | | |
| | «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն | Նախագծերի փաթեթ | **Առաջարկում ենք նախագծերի փաթեթից հանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին** | **Չի ընդունվել:** Արտակարգ դրության ընթացքում որոշումների կայացումը պահանջում է | **Չի ընդունվել:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **օրենքում լրացում կատարելու մասին» (Կ-587[1]-23.04.2020-ՊԻ-011/0)**<br>**Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:**<br><br>**Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է, թե որ նորմատիվ-իրավական ակտերը ենթակա չեն փորձաքննության: Ավելին՝ հոդվածի 1-ին մասը արդեն իսկ նշում է, որ թե՛ արտակարգ, թե՛ ռազմական դրություն հայտարարելու նախագծերը ենթակա չեն փորձաքննության:**<br><br>**Օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասը նշում է, որ տվյալ օրենքի իմաստով փորձաքննությունը պետական-իրավական փորձաքննությունն է, որի իրականացվում է Սահմանադրությանը և Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքին** | խիստ օպերատիվություն, ինչը գործնականում հնարավոր չի լինի ապահովել նախագծերի փորձաքննության իրականացմամբ: Նույն տրամաբանությամբ էլ գործող կարգավորումներով փորձաքննության չեն ենթարկվում արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշումների նախագծերը: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **նորմատիվ իրավական ակտի նախագծի համապատասխանությունը որոշելու նպատակով:**<br><br>**Մինչդեռ սույն նախագծով առաջարկվում է փորձաքննության չենթարկել ոչ միայն արտակարգ դրության, այլև ինչպես նաև ռազմական կամ արտակարգ դրության պայմաններում սահմանափակումների կիրառմանը և միջոցառումների իրականացմանն ուղղված նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, ինչը անընդունելի է, քանզի ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածը սահմանում է, որ «*Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին* | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | *մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ սպանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:»*, ինչին ի լրումն 78-րդ հոդվածի համաձայն. *«Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:* | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | *Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:»*<br><br>Անհրաժեշտ է նաև չմոռանալ, որ Սահմանադրության 79-րդ հոդվածն էլ անդրադառնում է այն հանգամանքին, որ *«Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:»*<br><br>Պետաիրավական փորձաքննությունը իրականացվում է հենց այն նպատակով, որպեսզի սահմանափակումները չկատարվեն | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **Սահմանադրությանը հակասող եղանակով, պահպանվի որոշակիության և համաչափության սկզբունքները, չխախտվեն մարդու իրավունքները և ազատությունները, ինչու ոչ՝բացառվի Սահմանադրական կարգի տապալումը:** | | |
| | Կառավարություն | Նախագծերի փաթեթ | **Առաջարկությունները՝ կից տեղեկանքով:** | **Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: | **Ընդունվել է:** |